ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կենտրոնացված ջեռուցման կաթսայի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/45» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/45 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում ապրանքի մատակարարման ժամկետը սյունակում նշված «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել են «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թ. դեկտեմբերի 27-ը ներառյալ» բառերով և Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5, 8.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 24.12.2019թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/45» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 27» դեկտեմբերի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ջերմաէներգո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մելքոնյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 24.12.2019թ. կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/45» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում ապրանքի մատակարարման ժամկետը սյունակում նշված «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019 թ. դեկտեմբերի 27-ը ներառյալ» բառերով և Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Ջերմաէներգո» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 22/3
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 2051022005371001
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ 02508339
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ Շենգավիթի մ/ճ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Մ. Մելքոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

« 27 » դեկտեմբերի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 24 » դեկտեմբերի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/45» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	44621160/501	Կենտրոնացված ջեռուցման կաթսա	1 900 000	**1 900 000**

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Ղեկավար՝ Ա. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ջերմաէներգո» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 22/3
Հ/Հ՝ 2051022005371001
ՀՎՀՀ 02508339
«Ինեկոբանկ» ՓԲԸ Շենգավիթի մ/ճ
Տնօրեն՝ Ս. Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ